

ԱՄԵՐԻԿԱՆԻՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ	համար
Տարեկան	12 Թր
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Ամերիկայի	համար
Տարեկան	3 ցր.
Վեցամսեայ	1.50 »

Մանուցիակ սոյոք անա-  
բիւն երկուսն հասկոյ 40 ս.  
իսկ վերջին երեսն հա-  
մար 20 անգամ է. երե-  
սին տեղի ակզակներու  
համար 20 0/0 զեղջ կըլ

Կանոնադրութիւն համար 40 անգամ

# ՇԱՐՋՈՒՄ

ՄԱՐԿԻՆ ԱՅԳԱՏՆԵՆ ԲԱՆԴԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԸ ՏԱՐԱԿԱՆԻ ԶՈՐԵԲԵՆՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Նամակ եւ դրամ դրկի  
Խմբագրութեան հաս-  
ցեիւն .

Редакция на вѣстникъ  
„Шаржумъ“  
Варна

Redaction du journal  
„Charjourn“  
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար  
ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )  
Պուշկարիոյ համար  
ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք եւ չնկ տրուի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱՇՄԱՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵՆ

## ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ

Լօնտօնի մէջ կատարուած ո-  
ճիւրհներուն շուրջը սկսած է լու-  
թիւն տիրել, դաւադիրները կը  
հրճուին, բայց կատարուած իրո-  
ղութիւնը մեր ազգային կեան-  
քի մէջ այնքան տխուր ե-  
րեւոյթ մըն է, այնքան սեւ,  
որ մենք ստիպուած ենք անգամ  
մըն ալ կանգ առնել այս հարցի  
առջեւ, խզել լուծութիւնը և բը-  
նորոշել իրերու դրութիւնը:

Ո՞վ էր այս եղբայրագաւ շա-  
րագործութիւնները նիւթողը,  
Եւրոպական մամուլը միաձայն և  
բացարձակ յայտարարեց, որ  
Ալֆարիստները, այսինքն Վե-  
րահազմեալներու հատուածը,  
կանխօրէն պատրաստուած ծրագ-  
րի մը համաձայն գործադրել  
տուին ոճիւրհները: «Թան» հաղոր-  
դէց աւելի վրդովեցուցիչ ման-  
րամասնութիւն մը: Ալֆարիստ-  
ները վարձած են Եօրկի Թանքի  
անուն արհեստով մարդասպան  
յոյն մը և զրկած զայն սպաննե-  
լու Նազարէզզը, որ իր հրօպա-  
րակագրի ուժեղ ու կրակոտ գըր-  
չով այնքան մղում տուաւ յիշա-  
փոխական ըմբոստ գաղափարնե-  
րու մեր մէջ տարածման գործին,  
Սագունին որ նուիրուած հայրե-  
նասէր մըն էր: Երկուքն ալ վե-  
րակազմեալներու կողմէն մահ-  
ուան դատապարտուած, բայց  
ուշիշով յանցաւոր:

Եւրոպական մամուլի վկայու-  
թիւնը լսելէ վերջ զիմենք նա-  
եւ ուրիշ փաստի մը:

Վերակազմեալներու օրգան  
«Ձայն Հայրենեաց»ի 235 թիւին  
մէջ այս թերթի վարձուած խմ-  
բագիրը՝ գիտովցած և խելակո-  
րոյս անբարոյականութեան ու  
ապականութեան թոյնէն՝ կատա-  
ուածացնէ Եղբայրասպանութեան  
այն փորձը, որ կատարուեցաւ  
Ամերիկայի մէջ հին-Հնչակեա-  
նի մը—Սապահ-Գիւլեանի վրայ:  
Իհարկէ «Ձ. Հ.» պատրաստ էր  
փոխանակ աստուածացումի՝ եղա-  
ծը ուրանալու, բայց չէր կարող,

որովհետեւ ամերիկեան դատա-  
ւորները հաստատած ու վճիռ ար-  
ձակած են յանցաւորին դէմ: Ա-  
տոնցմէ գատ կայ հին-Հնչակեա-  
ներու շատ հիմնական սմբատա-  
նութիւնները: Անցեալները վե-  
րակազմեալ մը կըսէր, «Եթէ հաս-  
տատուէր, որ այս ոճիւրհները վե-  
րակազմեալներուն կողմէ գործ-  
ուած են, զգուանքով կը հեռա-  
նայի անոնց շրջանակէն»:

Ինքզինքնիս չը խարենք. հի-  
մայ ալ կարող ենք տրամաբանօ-  
րէն հետեւցնել որ, Լօնտօնի  
Եղբայրասպանութիւնները գոր-  
ծողը Վերակազմեալներն են:  
Ստով այդ հատուածը նոր ապա-  
ցոյց մըն ալ տուաւ՝ թէ ինք պա-  
շտօնաւորներու և Եղբայրագաւ  
ոճրագործներու խմբակ մըն է:  
Բայց ցաւալին այն է, որ այդ  
չարագործ և ազգայաւ խմբակը  
կապրի հայ ժողովրդի մէջ և դեռ  
արմատախիլ չէ եղած: Յանցա-  
քը՝ Յանցանքը զայն ապրեցնող  
ժողովրդին է: Դարաւոր ստրկու-  
թիւնը մեր մէջ ձգած է այնքան  
խոր արմատներ, որ մաքրագոր-  
ծուելու համար երկար տեսնի և  
մաքուր գործիչներու ստուար բա-  
նակի մը պէտք ունինք:

Ի՞նչ ընէ ժողովուրդը. պար-  
սաւազրե՞ր ստորագրէ, բողոքի  
արտայայտութիւններ ընելու հա-  
մար ցոյցե՞ր կազմակերպէ և ար-  
գիւնքը հաղորդէ Ալֆարիստնե-  
րու կեդրոնին: Ո՞չ, Այգպէս  
վարուելով մենք պաշտօնական  
յարարելութեան մէջ մտած կըլ-  
լանք ոճրագործներու հետ և կը  
խանգարենք զոհերու քունը:  
Ուր որ տեսնենք անոնց ներկա-  
յացուցիչը, ուր որ լսենք անոնց  
անունը զգուանքով հեռանանք  
անոնցմէ և արտաքսենք զանոնք  
մեր մէջէն:

Այս թող ըլլայ անոնց համար  
արգար պատիժ: Մենք այսքան  
խիստ և անողոք կը գտնուինք,  
որովհետեւ չարիքը ազգային է  
և հետեւանքը ահուելի...

Ահա՛ երեկուան մեծազորդ  
միութեան և եղբայրացման ող-

բերգական վերջաբանը, և դեռ  
կը գտնուին շարամիտ մարդիկ,  
որոնք միութեան նոյն հինցած  
և սափակցած քարոյզ կը կար-  
գան մեր գլխին. բայց մենք ա-  
տով զբաղելու համար այլևս ոչ  
տրամադրութիւն ունինք և ոչ  
ժամանակ: Բուն երկրի մէջ կեն-  
դանի գործը մեզ կըսպասէ...  
Մարգարէանքի

## ՎԱՃԱՆ ՎԱՐԴ. ՅԱԿՈՒԲԱՆ

Յաւալի լուրեր կը հասնին  
խմբագրութեանս Սօֆիայէ, ուր  
կը գտնուի դեռ, դժբախտաբար,  
Վահան վարդ. Յակոբեան: Մենք  
արդէն այս անարժան եկեղեցա-  
կանին անցեալ կեանքին գրուագ-  
ները, իրենց զրուելի մերկու-  
թեանը մէջ, չու պարզեցինք՝  
թոյլ չտալու համար որ պուլկա-  
րահայերը իր կեղծապարիշտ  
չողովարար վարմունքէն ու մեղ-  
րածորան լեզուէն շլանալով՝ զա-  
նիկա Պուլկարիոյ առաջնորդ  
այսինքն փորձանք ընտրեն:

Մեզ հետ ամբողջ պուլկարա-  
հայ մամուլը, ինչպէս նաեւ Պուլ-  
կարիոյ հայուլթիւնը անհուն հրճ-  
ուանքով իմացան թէ հայ եկե-  
ղեցականութեան այդ մահաբոյ-  
ծը՝ հակառակ իր ձեռք տուած  
անխոստովանելի և անարդ միջոց  
ներուն՝ շլանողեցաւ իր յիմարա-  
պէս ըղձացած նպատակակէտին  
հասնիլ, որով և գուցէ աննախա-  
տեսելի աղէտներու դուռ մը պա-  
կաս բացուած եղաւ Պուլկարիոյ  
հայութեան արդէն յուզուած ու  
խարխարուած շէնքին վրայ:

Անշուշտ զգուանքով ու աղա-  
մայ է որ այս անձին նկատմամբ  
գրիչ շարժելու պէտքը կըզգանք.  
Վասնզի, գոնէ կը կարծէինք  
թէ այս յիմար վեղարաւորը՝ իր  
գործը աւարտելէ յետոյ՝ ամէնա-  
յետին ուղղամտութիւնը կունե-  
նար այլևս չհետապնդելու իր  
թագուն նպատակին իրագոր-  
ծումը և անձայն անշուշտ վերա-

դառնալու իր պոստական ան-  
կիւնը, հոն շարունակելու համար  
իր կեղծիքի ու շահամուլթեան  
վարնոց կեանքը:

Բայց իր բռնած ընթացքը՝  
պուլկարահայ առաջնորդին ընտ-  
րուելէն ետքն իսկ՝ ահա կը ստի-  
պէ մեզ անգամ մըն ալ անոր դի-  
մակը պատուելու և անոր տակ իր  
ապուշ և դիւային ծամածուծը  
երեւան հանելու:

Ինքզինքը առաջնորդութեան  
պատուէն յաւէտ զրկուած և մի-  
եւնոյն ժամանակ եպիսկոպոսա-  
նալու իր խօլ տենջանքին իս-  
պառ գոլորշիացումին ի տես՝ ահա  
ուելի կատաղութեամբ լեցուած՝  
այս մարդուկը հիմա իր/նենդու-  
թեան ու էնթրիկի մեքենան լա-  
րած է ներսէս եպիսկ. Ասլանեա-  
նի ընտրութիւնը բեկանել տալու  
համար, կամ թէ անոր վաւերա-  
ցումը անհնարին դալ ձնելու հա-  
մար:

Ու զէնքերուն, միջոցներուն  
ամէնէն վատը, ամէնէն զրուելին  
ընտրած է. կուսակցականու-  
թեան վտանգող զրպարուանքը  
նետած է Պուլկարիոյ առաջնոր-  
դին հասցէին, մինչդեռ այսօր  
ամբողջ Պուլկարիոյ հայութիւնը  
և մամուլը, առանց կուսակցա-  
կան խարութեան, իրենց հաւա-  
նութիւնը միացուցին սոյն ար-  
ժանաւոր եկեղեցականին վրայ,  
խորապէս համոզուած թէ՛ ան ա-  
մէն տեսակ կուսակցական կաշ-  
կանդումէ վեր կրօնաւոր մըն է  
և անձնական ուժէ մասնաւոր կապ  
և շահ չունի ու է կուսակցու-  
թեան հետ:

Այս պայմաններուն մէջ՝ ել-  
լալ՝ անկիւններու մէջ՝ ասոր ա-  
նոր փորտալ և, ո՞վ գիտէ, գու-  
ցէ նոյն իսկ գրել ուր որ անկ է  
թէ Պուլկարիոյ առաջնորդը այ-  
սինչ կուսակցութեան կը պատ-  
կանի, անոր ընտրելին է, անոր  
շահերուն պիտի ծառայէ: Եւն.  
վարմունք մըն է, որուն առջեւ  
պիտի ընկրկէր ամէնէն վատ հո-  
գին, ամէնէն ցած սիրտը, ա-  
մէնէն ողորակող նկարագիրը:

Պիտի յաջողի իր մեքենայու-

Թեանց մէջ այս անպիտան մար-  
գը. չենք գիտեր. մինչև ցարգ  
իր բոլոր նենգ միջոցներուն ա-  
ռաջքը կարելի եղաւ առնել. Ա-  
ռաջնորդական պատգամաւորնե-  
րուն ուշադրութեանը մատնանիչ  
կընենք այս իրողութիւնը, և կը  
սպասենք որ անոնք այս էնթրի-  
կան կրօնականին աղէտալի դոր-  
ծունէութիւնը կասեցնեն ժամա  
նակին, և թող չտան սր ցաւալի  
անպատեհութիւն մը տեղի ունե-  
նայ.

Վարդապետը՝ իր մեքենայու-  
թեանց մէջ ազատօրէն և անկա-  
խօրէն շարժելու համար՝ մինչև  
ցարգ ժողովի չէ հրաւիրած առ-  
ժամեայ Յանձնաժողովը, հակա-  
ռակ պատգամաւորներուն այս  
մասին իր տուած որոշ և հաստատ  
խոստման:

Նմանապէս իմացած ենք որ  
վարդապետը՝ Պուլկարիոյ առաջ-  
նորդութեան հաշուոյն գանազան  
տեղերէ հաւաքած գումարները  
չի՛ յանձնել կոր առժամեայ  
Յանձնաժողովին, ինչ որ պար-  
տաւոր էր ընել. Պալքէսէրի  
խեղճ հրկիզեալներուն նպաստ-  
ներուն բաշխման մէջ իր ապօ-  
րէն ու շահամոլ շահատակու-  
թեամբը ծանօթ այս կրօնաւոր-  
րին նորանոր շահատակութիւն-  
ներ թողաւ իր աննեղելի պան-  
ցառութիւն մը պիտի ըլլայ Պուլ-  
կարաշայտէս և մասնաւորապէս  
առաջնորդ. պատգամաւորներուն  
համար:

Ժամ առաջ՝ թեւէն բռնելու  
գուրս նետելու է այդ խռովա-  
րար տարրը:

### ԿԱՐՍԻՐ ՕՐԵՐ




Կովկասում հայոց կալածանքի գը-  
րաւման հարցը անհամեմ, անսպա-  
սելի բարդութիւններ յառաջ բերեց  
ե՛ւ Կովկասում ե՛ւ արտասահմանում.  
Բողբ հայկական շրջանակները միան-  
գամ ից ցնցեցին այս ամենատորին  
յափշտակումից: Եւ արդէն առաջին  
բոլոր յօրինող շրջանակի մեծամաս-  
նութիւնն իսկ զգաց, թէ մի բոլոր-  
բովին հակամարդկային, իրաւաբա-  
նական ամենատարրական հիմքից  
զուրկ քայլ է տնտ. կամ պատ-  
րաստութեամբ անել ձեռք մեկնելով  
ամբողջ հայ ժողովրդին պատկանող  
գանձերին ու կարածներին: Եւ սա-  
կայն նրանք ունէին մի խրատուսա-  
կան կէտ, մի յենարան, որը յու-  
սադրում էր նրանց անել այդ վտան-  
գաւոր քայլը: Դեռ քանի՞ տարիներ  
առաջ նրանք յափշտակեցին եւ կամ  
ընջեցին էլի հայ ժողովրդին պատ-  
կանող հաստատութիւններ, փչաց-  
րին մեր ազգային կայերը պահպա-  
նող էնքան կարեւոր հիմնարկութիւն-  
ներ: Մի շարք բացայայտ յափշտա-  
կութիւնների առաջ կովկասահայը  
ձեռները ծալած նայում էր անշարժ  
անկենդան: Փակեցին նրա վախժա-  
րանները, քունդեցին նրա բարեգոր-  
ծական ընկերակցութիւնները, իսկ

նա դիակի անտարբերութեամբ վե-  
րաբերեց այդ բոլորին:

Ինչո՞ւ կովկասահայի ձեռքից նրա  
ինքնապաշտպանութեան միջոցները—  
չէ՞ նա օտար էր այդ երկրում—խըն-  
ցին նրա ձեռքից եւ հացը, նա մնաց  
քաղցած: Այժմ հարկաւոր է մի վեր-  
ջին զօրեղ կից, հարած առ ու տա-  
պաւել նրան գետին անկենդան և Նա  
ապացուցեց, թէ պաշտպանութեան  
անընդունակ է, ուրեմն եւ արժանի  
է այդ հարածին: Ինչ իրաւունքով  
եւ ո՞ւմ նա պետք էր բողբել, չէ՞  
? ա օտար է այդ երկրում, զարկը,  
անտիրական: Դա պարզ էր. ով տա-  
լիս է ուտելու հացը իր ձեռքից, նա  
պէտք է մեռնի: Ահաւասիկ այն  
արւամարտական պատուանդաւը, ո-  
րի վրայ կանգնած ներկայացաւ պե-  
տական խորհուրդէն Գալիցիին կող-  
ւած մարդակեր արարածը: Եղեո՞ւր  
սկսեց վերջապէս, բարձրագոյն հը-  
րամանը պայթեց մահաւոյ գոյժը  
հասու կովկաս եւ սակայն իրերի ըն-  
թացքը յանկարծ յեղաշրջեց: Զոհը  
տեսաւ եկող հարածը, զգաց կորստի  
հաւերութիւնը ու բարձրացրեց,  
զէմ տեղ պաշտպանութեան բազուկը:  
Անողորմ կռիւր գնալով սասկանում  
էր ու սրբագործում. կողպարում  
հոսող արեան թարմ վտակներով,  
ի՞նչ էր լինելու սրա վախճանը: Այս  
հարցը բաւական տատակոտ էր եւ  
պատասխանը մնում էր մտայն ապա-  
գայի խորհրդաւոր ծալքերում: Այժմ  
միայն մի բան պարզ էր, այն՝ թէ  
նախկին զօր անկենդան ու անտար-  
բեր մի մարմին, մի դիակ չէր այլ-  
եւս, այլ հզօր ախոյեան: Եւ կը-  
ռիւր, կեանքի եւ մահաւոյ անոնի  
կռիւր շարունակվում էր այժմ երկու  
հարեւան բնականութիւնների սահ-  
մաններում: Երկուսն էլ նոյն ժողո-  
վրդի նահատակման համար: Ինչո՞ւ:  
Չգիտենք, թէ ի՞նչ կարող էին պա-  
տասխանել դարերից ի վեր մարտի-  
րոսացող ամբողջ հայ ժողովրդի բեր-  
նից ժայթքող այդ «ինչու»ին մեր  
ազգային, կամ նրանց լիզումով, «ոչ  
նացիօնախոսական» հողի վրայ կե-  
ցող սօցիալիստ պարոնները. հային  
սահմանում է հալածանք ամբողջ աշ-  
խարհում. նա չունէ ազատ շնչելու  
համար մի ազատ անկիւն. նրա ար-  
եան ծարաւ է ե՛ւ Իսլամը ե՛ւ Ռուսը,  
նրա գաղթականութիւնները չքացել  
են եւ Լեհաստանում, ե՛ւ Հնդկաս-  
տանում, ե՛ւ Ռոմանիայում, եւ ես  
ի՞նչ գիտեմ թէ դեռ որտեղ են փչա-  
ցել ու փչանալու են...:

Էլիշ Եղարշեանց

### ԵԿԻՊՏԱՆՈՑՈՒԹԻՒՆԸ



Ասիէ առաջ վերին Եգիպտոսէն  
«Շարժում»ին երբեմն գրած եմ եգիպ-  
տահայ ընդհանուր բարոյական մի-  
նողորտի մասին եւ ցուցաբերած  
պատկերներ անոր ներքին ու արտա-  
քին կեանքէն: Այսօր սակայն՝ պի-  
տի գրեմ եգիպտահայ վաճառականու-  
թեան կեանքէն մտածելով թէ՛ երբ  
ցեղ մը կը յառաջգիմէ վաճառականա-  
կան ապարդեղին մէջ ատիկա տեսակ  
մը գրաւական է անոր մտային ըն-  
դունակութեան եւ զարգացման ա-  
տիճանին:

Հոս կարեւոր չէ թւարանական  
հաշու թուաշարի եգիպտահայ վա-  
ճառականին արտածումի եւ ներս-  
ծումի քանակը, ո՛չ, ես պիտի աշ-  
խատիմ որքան կարելի է նեղ գծե-

րու մէջ ցոյց տալ թէ՛ Եգիպտոսի  
մէջ կան հայ վաճառականներ, եւ  
եթէ կան անոնք իրենց ընդունակու-  
թեան, կարողութեան շնորհիւ հա-  
սած են իրենց այսօրուան նիւթական  
վիճակին. թէ բաղդին օգնութեամբ  
աստիճանօրէն բարձրացած ու զրամի  
տէր եղած են: Տեսնենք:

Եգիպտոսի մէջ հայոց վաճառակա-  
նութիւնը երեք ճիւղի կը բաժնուի.  
Ն. Երեսօրեայ վաճառականութիւն,  
Բ. Ոսկերչական վաճառականու-  
թիւն.

Գ. Սեղանաւորութիւն:  
Երեսօրեայ վաճառականութիւնը  
կը սկսի Մաթոսեաններու բաւական  
կարեւոր սունէն, յետոյ Կամարա-  
կանները, Մելքոնեանները ու ա-  
տիճանաբար զվարի վար ուրիշ կարգ  
մը ծխախոտի հայ վաճառականներ,  
որոնք քիչ թէ շատ իրենց տեղը ու-  
նին:

Ոսկերչական վաճառականութիւնը  
կը կարծեմ թէ տիրականօրէն հա-  
յերու ձեռքը կը գտնուի. հայերը  
այդ ճիւղին մէջ բաւական զարգա-  
ցած ըլլալով, անոր տեսակ մը վա-  
ճառականութեան գոյն տուած են  
արհեստի սահմանէն անցնելով. ու-  
րախառնի է խոտովանիլ թէ, գաղ-  
թականութեան հոսանքէն քշուած  
չատ մը կարօտ արհեստաւորներ էին  
որ՝ այսօր լաւ գրասիլ եւ գիրքի տէր  
դարձած են:

Սեղանաւորութիւնը, որսակայն ան-  
խղճութիւն պիտի ըլլար եթէ վաչ-  
խառնութիւն չ'անուանուէր. հայոց մէջ  
բաւական լայն ասպարէզ գտած եւ  
արեւելքի չՔըզ գագուտով—օտա-  
րին քրտանց արդիւնք խլի, աղքա-  
տին, չքաւորին, խեղճ զորավարին  
ամիւնը ծծել հարեւրին երեւակալու-  
թիւնը զօրածին շափ տոկոսով...  
Սմանէն գէշը, ամենէն խարանիչ  
ստորնութիւնը որ կայ այդ  
գործին մէջ, ափսոս որ մեր ազգա-  
յիններէն մեծամասնութիւն մը գը-  
կած է... այդ ստորնալից գործով առ  
հասարակ զբաղողները նախ արապ-  
կերցիները ապա կեսարացիներն են:  
Ահա եգիպտահայ վաճառականու-  
թեան ուրուագիծը: Հիմա պիտի  
խուզարկեմ այդ վաճառականներէն  
կարեւորներու անհատական արժա-  
նիք: Իրր վաճառական, ու պիտի  
ընտրուի անոնց նկարագրիւր իբր  
հայ: Եգիպտոսի մէջ, Մաթոսեան.  
ներուն՝ չնայած այնքան կարեւոր  
անուան որ կը յարգուի ամէն դա-  
սակարգէ, բայց իրենց այսօրուայ  
դիրքը ո՛չ թէ իրենց կարողութեան  
շնորհիւ է, այլ բաղդին կը պայտին.  
որովհետեւ՝ իրենք չունին այն բա-  
ւականաշափ մտային պոչարի ստաի  
ճանը՝ զոր պէտք է վաճառականա-  
կանութեան—լայն ասպարէզին մէջ.  
անա՛ Մաթոսեանները իբր վաճառա-  
կան. իսկ Մաթոսեանները իբր հայ...  
Եգիպտահայ ամենատիրու պատկերը  
կը ներկայանանորպէս թթու կաթո-  
լիկներ իրենք զիրենք վատարող  
զգաւով հայ ծնած ըլլանուեն. հայե-  
րէն իսովիւր տեսակ մը անարկանք է  
իրենց համար թուրքերէնը կը նա-  
խադասեն հայերէնը անտեսելու հա-  
մար. Մաթոսեանները որպէս եգիպ-  
տահայ կարեւոր—իրենց նիւթական  
դիրքով—ազգայիններ, որ մը օրանց  
չեն միացած ոչ մի տեսակ հայ—ազ-  
գային օգտակար գործի ստիլի,  
մեր խորթ զաւակը կը նմանին ու  
երբէ՛ք հարազատ ըլլալու յոյս չկայ

Եթէ սակայն իսպառ չայլատեմ...  
անա՛ Մաթոսեանները իբր հայ,  
Արժիւ Արժուի  
(Շարունակելի)

### ԲՍՑ ՆԱՄԱԿ ԹԱԻՐԻ ԶՅԻՆԵՐԻՆ

Եւ Եղիշէի բոլոր այս էնտրիկները  
տեղի տեցին վերջին ցաւալի դէպ-  
քերի, որոնց դուք ականատես եղաք:  
Հինգ երկար տարիներ աշակերտները  
միևեռոյն ուսուցչական խմբի ուղ-  
ղութեամբը վարժուած և նրա ստաւե-  
լութիւնները գնահատած լինելով  
թոյլ չը տեցին որ աննարժաններ  
և տարբեր ուղղութեան հետեւողներ  
տեսուչ լինին: Աշակերտները այս  
մարտաւարութիւնը պատճառաւ համար  
Եղիշէն և իր համախոհները խլիճ  
շարին և ամօթ չզգացին Պարսիկ  
օտարականներու զարկելի դպրոց, երե-  
խաներին ձերբակալել տալու նպա-  
տակով. նոյնպիսի արհաւիրքներ  
ենթարկելով նաեւ բողբող ծնողնե-  
րին և ժողովրդին: Մի ականատես  
ցաւօք սրտի ինձ հետեւեալն է գը-  
րում. —Այդ դէպքից յետոյ, որ  
մանկավարժ—սօցիալ—յեղափոխա-  
կան(՞)... եանը, Լիւլաւայի պատ-  
ւաւոր(՞) հոգաբարձութիւնը և թն-  
մակալ առաջնորդ հոգեւոր հայր(՞)  
Եղիշէն՝ ձեռք ձեռքի տաւ սկսում  
են սուլթանական ոչ ժիմի զորավա-  
րութիւնը, ալ ու ձախ ֆէրրաշներ  
ուղարկելով. չեն ամաչում և վտա-  
հուցութիւն են ունենում ֆէրրաշներ  
ուղարկել նաեւ դպրոց աշակերտնե-  
րին բռնելու: Եղիշէն պատգամաւոր-  
ներից մի քանիսին ֆէրրաշներով բե-  
րիւ աւելց և մի քանիսից տուգանք  
առաւ:

Ահա այսպէս Եղիշէն անձնական  
կրքից ու վրէժխնդրութիւնից դը-  
րւած խանգարեց Լիւլաւայի դպրոցը,  
որի անդրանիկ պտուղը՝ Զ. զասա-  
րանից ընթացաւարտները՝ անցեալ  
տարի վախկնդիք: Եղիշէն այդ ընթա-  
ցաւարտների փորձնական դասերին  
ներկայ գանձելով կեղծ ուրախու-  
թեամբ նրանց ողջունեց որպէս ան-  
դրանիկ արժանաւոր ուսուցիչների,  
Պարսկահայ հողի վրայ մեծացած ու  
զարգացած, նոյն իսկ շատերի ներ-  
կայութեանը յայտարարեց, որ Լիւլա-  
ւայի ընթացաւարտները Ղալալի ու-  
սուցիչներից աւելի բարձր և աւելի  
արժանաւոր են: Բայց նոյն Եղիշէն  
այսօր անամթաբար յանդիմում է ա-  
սելու, որ այդ ընթացաւարտներին  
չը պիտի հաստատէ, եթէ նրանք  
գիւղական դպրոցներում պաշտօնի  
կոչեն:

Իսկ գիւղական դպրոցների վերա-  
բերմամբ նրա անտարբեր վարմուն-  
քը ձեզ յայտնի է: Առաջին անգամ  
ես էի, որ նրա ստապատիր խօսքե-  
րից խաբւելով անցեալ տարի Սալ-  
մասից «Մշակի» գրեցի, որ Եղիշէն  
գիւղերուն նոր դպրոցներ է բաց ա-  
նելու: Դ՛ու, թաւրդի դպրոցներից  
հեռացրած երկու ուսուցիչներ իր  
հետ Սալմաստ բերեց, նրանց գիղե-  
րում տեղափոխելու համար, սակայն  
ժողովուրդը շատ իրաւացի կերպով  
նկատեց, որ եթէ նրանք լաւ ուսու-  
ցիչներ էին, ինչու՞ համար թաւրդի  
դպրոցներից մերժեցին, և ժողո-  
վուրդը նրանց չընդունեց. միայն Ե-  
ղիշէն մէկին տեղափոխ Սալմա գիւ-  
ղում, հակառակ զի դպրոցների բո-  
ղբերն: Ուսուցիչները խախտեցին  
պահանջող Եղիշէն, ցէնք չունեցող  
և Ելիւանի թեմական դպրոցի՝ Գ.

գաւարանից դուրս եկող այդ ուսուցիչին այս տարի էլ զօրով Սալմաստից հեռանալու փախած էր։ Իսկ զիւրազարքէրը երեսնամեակին այժմ զպարտք չեն ուզարկուած։ Նոյն ուսուցիչի արժանաւորութեան և գանազան վարձուքները մասին դուք չառան նպատակաւ հարցէք լսած, վերջերս էլ Սալմաստից մի թղթակից օճարժուած ի մէջ նրա մասին գրել էր։

Նոյնպէս լաւ էք ճանաչուած մի ժամանակ թաւրիչի դպրոցներում ուսուցչութիւն անող վանկերի Ն. Գ. ին՝ որին Նիդրլանդներէն տարի պաշտօնական գրով Թաւրիզի Տաճկաց կօնսիլին մասնակց իրրեւ ոճրագործ, Բայց մի տարի յետոյ, Նիդրլանդներէն միջոցով վանկից շայտքներ բերել տալով, գրուած Սալմաստի փոխտնօրէն Ընծակ վարդապետին, որ նրա համար գրեական դպրոցներէն մէկում պաշտօն գտնի։ Մենք չը պէտք է հետաքրքրուինք նրա ոճրագործ լինել կամ չը լինելու խնդրով, այլ այն բնութեւնով, որ Նիդրլանդներէն (Իրաւի կամ անիրաւի) վատ մարդ ճանաչելով հանգերձ, իրրեւ լաւ մարդ առջարկուած է մատուց սերունդի կրթութիւնը նրան յանձնել։ Եթէ Ն. Գ. լաւ մարդ էր, ինչո՞ւ համար նրան մատուց Տաճկաց փոխտնօրէն, իսկ եթէ վատ մարդ էր, ինչո՞ւ համար մատուց սերունդի պատրաստելու գործը նրան է յանձնուած։ Երկու զկարգումն էլ երեւան է գալիս Նիդրլանդի ստորութիւնը, ցածրագործութիւնը։

Դուք պէտք է յիշէք, որ Սալմաստի փոխտնօրէն Ընծակ վարդապետը, Սարգիստի հարստանարու թիւնքներն արգելք հանդիսանալով, նրա թիւնքները շահեց և նրա զբարձրութիւններին զո՞ գնաց, հե-

ռացուելով Սալմաստից, Այս խնդրում Նիդրլանդներէն կարողացաւ պաշտպանել վարդապետին և Սարգիստի պաշտօնական անել տալ։ Մինչդեռ նոյնատեան, բայց աւելի անկարեւոր պարտքներում Սալմաստի Այվատեան պաշտօնական անել է աւան Սարգիստի անուններին, Նիդրլանդներէն այս կարգի թող վարձուքներով և թիւնքներով կողմնակից ատանորդական հեղինակութիւնը ոչնչացրեց և հայերի համար անտանելի մի գրութիւն ստեղծեց։

Նիդրլանդներէն Սարգիստի պաշտօնական անել չը տալուց, նոյն իսկ քաջաբերում է նրան, նրա կողմէն ծածկուելու և ասելով. — Գնա՛ր որ ես լաւ լինիս եւ, դուք էլ այստեղ Սարգիստի կողմէն մնա՛ք. — և այս խոսքերը անցնելու տարի Սալմաստումն էր ստուծ, մի այնպիսի ժամանակ, որ հայերը իրա մօտ գանգաւոր էին եկել և Սարգիստի հարստանարութեանը զէմ էին բողոքում։

Մինչդեռ ժամանակ էր որ Դաշնակցութեան զինուորներէն մին՝ Դարմօն՝ Սալմաստում քէյֆ անելու միջոցով մէկին վերաւորում է։ Նիդրլանդներէն այդ զէյֆը վրայ կատարելով ուզում է Սարգիստի միջոցով նրան ձերբակալել տալ։ Այց Սալմաստի Դաշնակցութեան ներկայացուցիչը Նիդրլանդներէն արգելում է, յայտնելով որ Դարմօն կազմակերպութեան մարդ լինելով, կազմակերպութեան մարդ լինելով, կազմակերպութեան մարդ է նրան պատուել (այս տարի արդէն աւելորդ գործարարում է)։ Նիդրլանդներէն համաձայնում է ներկայացուցիչի այս իրաւացի նկատողութեան։ Բայց Նիդրլանդներէն կողմէն համաձայնութեան հէնց նոյն օրը Դարմօնի կառավարութեան է մատնում և ձերբակալել տալիս,

Դաշնակցութեան հրացանն ու ատրճանակն էլ միասին։

Դաշնակցութեան Նիդրլանդներէն այս կեղտոտ վարմունքի զէմ բողոքում և բռնաւ գլխաւոր արժէքն է պահանջում, որ և խոստանում է վճարել։ Նիդրլանդներէն զէյֆը ցոյց է տալիս որ ինքը բարոյութիւն զուրկ է հաստատանութեան, ազնուութեան և իր խօսքը յարգելու տարրական պարտականութեան։

Դոկտ. Կ. Փոշտեան — Ոսան (Շարունակելի)

ԹԱՍԵՐԱԿԱՆ

Անցեալ հինգշաբթի դիշեր, Պապանի խումբը Մառի ժամանակ սկսեալ շարքը լուրջ ներկայացուցիչ օրոնց համար վաղուց հետէ չէր ճաշակած վառնայի հասարակութիւնը։ Թատրոնը ծայրէ ի ծայր լեցուն էր, և նոյնիսկ շատերը նստելու տեղ չի գտնելով ոտքի վրայ մնացած էին։ Այնչափ տիկին Յակոբեանի է որ կը պարտինք խումբին այս վերադարձը լուրջ տրամաբանութեամբ։ Պապանի խումբը շատ պիտի դժուարանար և գուցէ դեռ երկար առանց զանց պիտի առնէր այդ կարգի ներկայացումն հասարակութիւնը հանդիսատեսին։ Եւ Տիկին Յակոբեանի լուրջ բնութիւնը վերաբերուածը որքան հաճելի է մեզ համար, նոյնքան օգտակար է իրեն արուեստագիտական համարին։ Արդարեւ պէտք է խոստովանել որ Տիկինը շատ բան կորսնցուցած է վերջին մէկ տարուան ընթացքին մէջ, և արուեստի կայծը, որ սկսած էր խոստովանութեան նշուել իր կուրծ-

քին մէջ, նսեմացեր ու ժտեցեր է հանգչելու՝ զրկուելով իր ցոլթէն ու խանդէն։ Այս էր պատճառը որ, Մառի ժամանակ զինով ու սրիկայ էրկան մը երեսէն յետին շքաւորութեան մէջ ինկած այդ դժբաղդ կիներ, որ տառապանքի բոլոր դաժանութիւնները կը կրէ և վերջին վերջոյ իր իսկ ձեռքով իր միակ զաւակը որբանցին կը յանձնէ, չի ներշնչեց բողոքովին այն ինքնաբոս կարեկցութիւնը, որ պիտի լեցնէր ու գերէր մեր սրտերը Մառի ժամանակ ցաւերուն ի տես, եւ արտի մղէր զմեզ փրկարար ձեռքով մը թշուառութեան ճանկերէն պիտի ազատելու։ Այսուհանդերձ, Տիկին Յակոբեան վարժութիւնը միայն կորսնցուցած է, և ապահովագրութեան քանի նոյնօրինակ ներկայացումներէ վերջ, Տիկինը ինքզինքը պիտի գտնէ, մասնաւոր երբ ուշագրութիւն դարձնէ խոսք տալու ձայնի փորձակութեանն որուն մէջ կարծես թրթրական հանրմի մը մեղրութեանն է որ կարտացոյցայ։

Պապանի ճշգրիտ պատկերացումն արժանի մը տիպարը Պերթրանի մէջ մենք գտանք այն պիտի ու անբարոյական էրկիւր՝ որ անհաշիւ ամուսնութեամբ մը կեանքերու դժբաղդութեան պատճառ կրկայ։ Ինչ տիպարը այսօր շատ ուղորական է և ամենուս մօտիկ։ Ու հինգշաբթի դիշեր Պ. Պապանի տեսնողները անշուշտ աչքի առջև և բերին իրենց հետաւոր կամ մերձակայ այն ծանօթները՝ որոնք նմանօրինակ կեանքի մը մէջ կնոյ մը ու զաւակներու դժբաղդութեան պատճառ եղած էին։

Պ. Երանեան նոյնպէս, իր յուր բարեկամի դերին մէջ կատարելագրութեամբ զուրս ելաւ։ Բէմի մէջ մենք

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(16)

ՆՈՒՆԻՐ Ա. Զ. — ԻՆ ԳԼՈՒՆ Գ.

Այո, աշխատինք Շեռտ, աշխատինք, բայց հայ յեղափոխականը երկաթից պողպատից պէտք է շինուած լինի՝ այս անգամ, բոլոր մասնային մէջ զէպի ապստամբութիւնը հաւաքական սէր, եռանդ և զօնորութեան տրամադրութիւններ ըստեղծելու համար։

Ու ինձ թուում է որ այդ երկաթ ու պողպատ տիպերը մեր մէջ քիչ են՝ շատ երկար և դժուար համար մեր գործը շատ երկար պէտք է սեւել. սերունդ պէտք է փոխուի, սերունդ։ Այդք մի գարծու շուրջը. 80 թեւականներին մէջ չէր յեղափոխական. քանի գարծուներ կրթութիւն ստացած երիտասարդներ պատրաստ էին երկիր խուժել, թուրքի հետ զէմ գիւմաց շափել, վէճք տալ և վերջ ըստանալ։ Քանի՞ օր մնացին... Ամառութիւն։ Աւերակ երկիր, աւերած ու խորտակած յեղափոխական շարքեր... Այո, նորից կարող են բացատրել հեռուներ, զիւրազանք գուրս գալ մեր մէջ — բայց դրանք էլ կանցնին ու կիրթան առանց մասսան, ժողովուրդը ամբողջովին ելեքտրականացնելու ապստամբական տրամադրութիւններով Քայքայված ենք և ես, և դու, և մեր սակաւաթիւ ընկերները, յեղափոխական երեւոյթի վատ բողոք մեր մէջ էլ չեն կայծերի է վերածել։

և այդ կայծերը երեւում են միայն նրա համար, որ մեր շուրջը բողոքով միջութիւն ու խուսարն է թագաւորում։ Այո, ես դժգոհ եմ թէ՛ գործից, թէ՛ ինձնից և թերահաւատ եմ, բայց դեռ գործում եմ, որովհետեւ դա ինձ համար մի սովորութիւն է դարձել։ Ես չեմ հաստատում որ մի լուրջ ծառայութիւն եմ անում յեղափոխական գործին, բայց նկատելով որ ուրիշները ոչինչ չեն անում, կրկին շարունակում եմ, ըստ սովորութեան, այդ փոքրիկ ծառայութիւնը անեմանդ ձեռով մատուցանել։

Ենթադրեմք տանջում է ինձ, բայց շուրջս բացարձակ մեղքութիւն տեսնելով՝ ինքս ինձ հանգստացնում եմ, ու շարունակում կ'ըլլայի անցնել այն ճանապարհը, որ հայի կեանքը այնքան բարեկեցիկ դրել է ներկայ սերունդի առջև։

Պետրոսը յոգնած մարդու ճշգրիտ կերպարանքը բնորոշելով դադարեց խօսելուց. ինքնազատախիտումի ծանր նշանները բազմաթիւ նուրբ կնճիկներով մէջ պարփակվելով երեւացին նրա լայն և սպիտակ ճակատի վրա։

Այդ միջոցին դուրը բացվեց և ներս մտաւ օրիորդ Նասէժտաւ Պետրովնան, միջազատիկ, կապույտ աչքերով, կարած ոսկեթիւ մազերով, պարզ հագնված մի թուրքուս և արւեստական լրջութեան դրօշը զէմքում ուղիղ նստելով երկու ընկերներին մօտ վրա տեց։

— Օհ, պարոններ, ես համոզված էի որ դուք միասին պէտք է լինէք. անշուշտ կրկին ձեր ազդի ցաւերի

մասին էք խորհում և յեղափոխական մեծ մեծ ծրագրերն պատրաստում հայերին հաւել պէս մորթող Սուլթանի զէմ։ Անհոգ եղէք, ես երկար չեմ նստելու և ձեր սրբազան մտածումներին ու ծրագրերին արգելք չեմ հանդիսանալու։ Ես եկայ հարցնեմ թէ ուր է Արշակը, քանի որ է նրան չեմ տեսել, և լսել եմ որ նա էլ որոշել է իր կեանքը զոհարելու Հայրենիքի սուրբ սեղանին։ Ուզում էի նրան անպատճառ տեսնել նախքան իր այդ վե՛հ սրտում իրագործման շաղի մէջ մտնելը։

— Այդ ինչ տօնով էք խօսում, օրիորդ, մի քիչ բարկացած նկատեց Շեռտանը. դա ինչ ծաղր է։ Մենք չը դիտեմք ուր է Արշակը, գոնէ ես, իսկ թէ նա ինչ որոշում է տել այդ էլ ոչ մեր և ոչ ձեր գործն է։ Շեռտանի խօսքերի վրա Նասէժտաւ Պետրովնան բարկութեան շրթերը կծեց, գոյն տեց, գոյն առաւ և աչքերը խոփոխելով ասեց.

— Այո, ծաղրում եմ, որովհետեւ ծաղրելի գործերով էք զբաղված. դեռ երկի սօցիալիստներ, մարքսիստներ էիք, իսկ այսօր թիւ ազգասէրներ էք դարձել. ու ես թարկվում էք ձեր փոքրիկ և ընկած ժողովրդի ազգայնական նեղ, բայց մեծ ձգտումներին և տրամադրութեանը։ Մարքսիզմը ազգութեան չէ բնորոշում, այլ դուք ինձնից լաւ գիտէք. երկի դուք մարքսիզմի իդէոլոգներ էիք ներկայումս և երգվում կատարի պայքար մղել այդ գաղափարը իրականացնելու համար, իսկ այսօր միացել էք ձեր ցեղին այն տարրերի հետ, որոնք թշ-

նամի են ձեր հիմնական դաւանանքներին։ Եւ դեռ բաւական չէ այն, որ դուք դաւանում էք ձեր պաշտօնի սօցիալական գաղափարներին ու սկզբունքներին, որոնք ապագայ ընկերային կազմակերպումի փարոսներն են։ Ծամբից չեղում էք և ուրիշներին ձեր ազգային թիւ միջնորդութի մէջ թիւեցնելու համար։

— Ահ, հիմա հասկացանք ձեր բարկութեան պատճառը, Նասէժտաւ Պետրովնա, Մեր խոլորցրած ուրիշներին մէկն էլ, ինչպէս երեւում է, Արշակն է՝, որը թիւ ազգասէր դառնելով, ըստ ձեզ, այլեւս իրեն թոյլ չը պիտի տայ ամուսնանալ մի ուս աղջկայ հետ. մասնաւոր այն պիտի մի աղջկայ, որը համարձակվում է իր սիրած տղամարդի ցեղին ընկած մայրիքը տալ։ Ամեն մի մարքսիզմ աւելի յարմարութիւններ ունի իր ժողովրդի մէջ այդ դաւանանքը տարածել. բայց այսօր մեր ժողովուրդը աւելի ճնշվում է բիրտ բռնութիւնից, քան կապիտալից։ Եւ մենք պարտաւորւած ենք նախ այդ սեղ շնչող բիրտ բռնութեան զէմ քառել, որին տապալելու համար մեզ հետ կը միանան մեր ցեղի բոլոր խաւերը։ Թերեւս այդ ձեզ դուր չի գալիս և դուք մեզ չը տաք յետադէմ տրտաւ... Բայց ինչպէ՛ս այդ տրտաւները չեն որ մեզ կը կասեցնեն։ Անշուշտ դուք էլ երբեք Մարքսիզմ, չէիք ցանկալ որ ազատասէր Անգլիացիները ինչէն Ռուսներին վրա, թէեւ անգլիական տիրապետութեան տակ աւելի զիւրին է մարքսիզմ տարածել։

(Շարունակելի)

զգացինք չար ոգի որ Պերթրանը գլխէն հանելու եկած է. ինչ շահ ունէր Բէմի այդ ընթացքին մէջ. բացարձակապէս ոչինչ. Լոկ քանի մը հաստ ճնկելու յոյսն էր, որ կը մղեր Բէմին թոյլ ու անմիտ Պերթրանը մոլորեցնելու. Պ. Երամեան ապահովակէս մեր բեմին ամենայնոց զէմքերէն մէկն է, թէեւ մինչեւ հիմայ խիստ քիչ անգամ իր վրայ խօսեցնել տուած է. բայց կը յուսանք որ այս նոր սկզբին մէջ Պ. Երամեան մեզի բաւական առիթներ պիտի տայ իր մասին երկարօրէն խօսելու:

Պապեանի խումբը անշուշտ դո՛ւ մնացած ըլլալու է հինգշաբթի գիշերուան խումբն քաղաքի մէջէն. լուրջ տրամեքը, ուրեմն, նոյնիսկ խմբին շահուն տեսակետով, նուազ արդիւնաւոր չեն, ինչպէս որ իրենք կառարկէին, երբ ամէն անգամ իրենց երեսին կը զարնուէր այդ պակասը. հասարակութիւնը կը գնահատէ ու կը քաջալերէ. ասիկա անուրանալի է այլեւս և Պ. Գալէմեանի ողորմելի պատճառարեւութիւնները հասարակութիւնը ծիծաղեցնելու պիտի ծառայեն եւ խմբին աշխատութենէ խոյս տալը լոկ պիտի ապացուցանեն այսուհետեւ:

Վերջին խօսք մը օր. Գալիւսի մասին. խմբին համեմն է ան, որ իր երեւուածին իսկ կը փարատէ ամէն տիպեր տպաւորութիւններ. անվիճելիօրէն յաջող պալէթիստ մըն է օր. Գալիւսի: Մենք կը փափագէինք որ շարունակէր խմբին մէջ մնալ. իր շահը եւ համբաւին անարատութիւնը այդպէս կը պահանջեն. Պապեանի խմբէն դուրս օր. Գալիւսի արժանիքը շատ կը նստանայ:

ԲԱՐԻ ԼՈՒԻՐ

Պետերբուրգից «Պէտլինեռ»-ի ակապակե թերթին հեռագրում են, թէ կովկասի կառավարչապետ իշխան Գալիցիին առողջութիւնը չափազանց վտանգաւոր դրութեան մէջ է. Թիֆլիզում երեք հայերից ստացած դաշտին հարւածներէն նա այժմ տառապում է «պէրիօստիտ» հիւանդութիւնից: Թերթը նրա հիւանդութեան աստիճանը բնորոշում է ասելով. «Գալիցիինը մահվայ անկողնում է»:

Մենք ցանկանում ենք որ շուտով նրան փոխադրեն մի այլ անկողնում, որտեղից նա երբեք յաւիտեան չը կարողանար դուրս գալ և իր արիւնտ ձեռքը նորից մեկնէր կովկասահայի կեանքին: Եթէ նրա մահանից յետոյ հիւսիսի բնակալութիւնը կանգնեցնէ մի մարմարէ արձան, որպէս յիշատակ վերջի մասյլ ու կարմիր անցքերի, որպէս անմոռանալի յիշատակ ոճրագործ միապետութեան այդ Գալիցիին կոչուած հրեշ գործիքի գոյութեան, արժէ՛. հազար անգամ աւելի արժէ մի ազատ վայրում. ուր զգալի քանակութեամբ հայ գաղթականութիւն կայ, կանգնեցնել մի համեստ

արձան, որպէս անշիջելի յիշատակութիւն պատմական այն փառաւոր մոմենտին, երբ հարստահարող հայութեան երեք անձնէր զաւակները մերկացած դաշտններով, վրէժի զգացումով բողբոջուած, խոյսցան սյցմ հմահուան անկողնում տառապող Գալիցիին: Արժէ կանգնեցնել այդպիսի մի արձան, իբրեւ ապացոյց, որ այդ երեք անձնուրաց հերոսները յարգուած են հայ ժողովրդից և նրանց նմանները միշտ կը յարգեն ու չեն յանձնել մոռացութեան թունաւոր ալիքներին...

Խմբի Շղարշ'անց 3 Նոյեմբեր 1903

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վերջին սուրհանդակով Պոլսէն ստացուած թերթերէ կիմանանք որ խառն ժողովը ինկատի ունենալով ներսէս և պիտկոպոս Աւանանի Պոլկարահայոց տաղնորդ ընտրուելը որոշած է եպիսկոպոսութեան վկայութեւ լի տալ Վահան վրդ. Յակոբեանի և Ռումանիա զրկել զայն իբր պատրիարքական փոխանորդ. Ռումանահայերը պետք է զգուշ գտնուին և չեն թարկուին Վահան վարդապետի ոտնձգութեանց:

— Կարգալու արժանի են «Հայրենիք»-ի վերջին թիւերուն մէջ կովկասեան նոր թղթակցութիւնները:

— Եւրոպական թերթեր հազորգեցին, որ Հին Հնչ. կեդրոնը փոստի միջոցաւ ստացած է պայթուցիկ նիւթեր պարունակող ծրար մը, զոր ստիկանութեան յանձնած են:

Այս ալ միջոցներէն ամէնէն ստորինն է. Ուրախալի է սակայն լսել, որ Հնչ. կեդրոնը իր պատգամաւոր ժողովին որոշումով արգելած է եղբայրասպանութիւնը:

— Ամերիկայէն մեզ կը գրեն, որ այնտեղ Հնչ. հատածները իրարու գէմ խիստ շատ լարուած են և զէնքով կը պտտին:

— Ռատնի Մահլէէն մեզ կը պրեն, որ Ստրալճայի կայարանի աշխատաւորները հանգանակութիւններ կրնեն ի նպաստ Հ. Յ. Գաշնակցութեան:

— Իմանանք, որ բարեօտեր անձ մը 13 ձեռք ձմեռնային ըզգեստներ նուիրած է Վաւեայի ազգ. վարժարանի աղքատիկ աշակերտներուն: Որքա՛ն ցանկալի է, որ ուրիշներ ալ հետեւէին այս բարի օրինակին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը Միւրցըլթէկի ծրագրէն զժգո՛հ է: Պուլկութիւնը մը սխալ քայլ մը կանուս:

նէ այդ ծրագրերը, որովհետեւ հոն ընդհ. ներման մասին ուէ յօդուած չէ ընդունուած և հսկողութիւնը մասնակաւոր արժէք պիտի ունենայ:

— Իշխանը զահաճառով մը բացաւ Սոպրանիէն: Նա յոյս յայտնեց, որ նոր կառավարութիւնը ջանք չպիտի խնայէ երկրի զարգացման և ազգային ձգտումներու իրագործման համար:

Իշխանը շօշուփեց մակեդոնական հարցը ու այդ առթիւ բանակին համար եղած ծախքերը յայտնեց, որ Պուլկարիա բոլորովին խողաղասիբական պիտի պիտի բռնէ զէպի իր դրացիները և մտնաւտնդ զէպի Ռուսիա իրենց ապատարարը:

— Ազգ. ժողովին նախագահ ընտրուեցաւ Տօք. Սթալկով 126 ձայնով, փոխ - նախագահ ընտրուեցան Կաթէվ և Բէթրով: Ընծամասնութեան հանդէպ ընդդիմադիրները ստիպուած են լրտել, իրենց զէմ կայ ահագին ընծամասնութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ի Ք Ի Ա

Երկու պետութեանց գեապանները Բ. Գունէն պահանջեցին Մակեդոնիոյ նոր ծրագրին գործադրութիւնը փութացնել, որովհետեւ ուրիշ պետութեանց կողմէ առաջարկ եղած է ծրագիրը ընդարձակել: Սուլթանը արտակարգ ժողով մը գումարեց. բայց նախարարները չկրցան ուէ որոշման հանգիլ:

—... Կը հեռագրեն, որ կովկասէն հայ ֆէզայիներու խումբ մը անցաւ Թուրքիա և Խորասանի մօտերը կուռի բռնուելով Թուրք զօրքերէն ջարդուեցաւ:

Թրքական աղբուրէ բղխած այս լուրի ստուգութեանը վրայ կը կասկածինք: Ծէղային ջարդելը այնքան ա՛լ դուրին գործ չ'է:

Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Բացուած են աւստրիական ընկերվարական կուսակցական ժողովները և կը շարունակուին, գոհունակութեամբ հաստատուելէ յետոյ թէ կազմակերպութիւնը ըրած է յառաջդիմութիւններ, հոն որոշուեցաւ. Ընտրողական հաւասար իրաւունքի համար բանաձեւ մը ընդունիլ և այդ մտքով եռանդուն պրօպագանդ ընել:

Բանւորական դասակարգային կռիւր յաջող կերպով մղելու համար, ըսաւ պատգամաւոր մը, պետք է բանորը իր միճակին ֆիզիքական և մտաւորական գիտակցութիւնը ունենայ, այգօլը

կը վնասէ բանորի ֆիզիքական զարգացման, ուստի ընկերվարական կազմակերպութիւնը պէտք է ամէն կողմ հակաալգօլական պրօպագանդ ընէ. Առաջարկը ընդունուեցաւ:

— Մաճարական անկախութեան կուսակցութիւնը կը շարունակէ իր կատաղի պայքարը կայսրութեան դէմ:

— Աւստրիոյ մէջ կատարուած են անթիւ հեռագրով շօղեկաւքերու հետ հարցողակցելու փորձեր, որոնք տուած են յաջող արդիւնք: Կայսրանէ մը եկած երկտրական ալիքները առաջ ընթացող շօղեկաւքէ մը ամենայն յստակութեամբ առաւ ու տեղեկացուց հեռագրի պարունակութիւն:

ՌՈՒՍԻԱ

Նիւմնի—Նովկօրօտի և Բինսքի մէջ հրէայ յեղափոխականները սպաննեցին ոստիկանական լրտեսներ: Մէկի մարմինը դաշոյնի 30 հարուածներով ծակծակուած էր: Ահաբեկիչները ազատ են:

Ն.ԱՄԱԿԱՏՈՒՓ

Նիւ - Եօրք, Հ. Յ. Դ. կօմիտէ — Թերթը կը ստանաք. Բաճնեգիրն զրկեցէք ուղղակի մեզ:

Ամերիկայի մեր բաժանորդներուն.— Մենք գիտենք որ մեր բաժանորդներէն մի քանիսը այդտեղէն մեկնած են առանց հասցեները մեզ փոխել տալու, անոնց թերթերը ստացողները թող հաճին մեզ իմացնել պէտք եղածը:

Ղալասար, Արժրունի գրագարան.— Գնարժուածը այսուհետեւ պիտի ստանաք. Բաճնեգիրն զրկեցէք մեզ:

Թ Ա Տ Ր Ո Ն

Նատէժտա Հայ դերասանական խումբը այս երեկոյ ներկայացում պիտի տայ Տէրեւ սիկին Յակոբեանի մասնակցութեամբ եւ Տ. Վ. Պապեանի առաջնորդութեամբ:

Մրագիր

- 1. Բարեկամի պատուոյ համար անձնագրութիւն, բարոյալից կտոր մը.
2. Պար եւ երգ Օր. Օլկա եւ Հ. Յամբր Բէօլէանի կողմէ.
3. Հովիւք եւ հովուհի եռաձայն երգ Տ. Տ. Պապեանի, Յակոբեանի և Օր. Վեհանուշի կողմէ.
4. Ոմբիք «Ոննդերը» զաւեշտական ծիծաղաշարժ կտոր մը 2 արարուածով.

Լաւ տեղեր գրաւել ուզողները թող աճաւարեն կանուխէն զնել տոմսակները:

Կիները չափաւոր

«Նաշկժսա»

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Цедягича „Взаимность“ Варна